ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 8 փետրվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով քաղաքացի Սվետա Հարությունյանի ՝ դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Քաղաքացի Սվետա Հարությունյանը 25.01.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածի «բ» կետով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է. «ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածի «բ» կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ»:

Վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը գտնում է, որ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի նշված դրույթը պատճառ է հանդիսացել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տվյալ փաստական հանգամանքների համար կիրառման ենթակա օրենսդրության ոչ ճիշտ ընտրության, օրենքի կամայական մեկնաբանման և, որպես հետևանք, անձանց՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի կոպիտ խախտման:

3. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ.

ա) դիմողը, ձևականորեն վիճարկելով վերոնշյալ հոդվածների դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴՈ-21 որոշման մեջ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

բ) Դիմողը չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել նաև, որ եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դեպքում դիմումն ակնհայտ անհիմն է:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 69-րդ հոդվածի 7-րդ կետերերի և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածի 2-րդ կետի բ) ենթակետի պահանջներով ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Սվետա Հարությունյանի դիմումի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

8 փետրվարի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-3